ԼՈՒՐԵՐ ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻՑ

ՄԵԾ ՀԱՅՐԵՆԱԿԱՆԻ ՀԱՂԹԱՆԱԿԻՆ ԵՎ ՇՈՒՇԻԻ ԱԶԱՏԱԳՐՄԱՆ 15-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄՈՒՄ

Մայիսի 9-ին, Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու և Վրաստանում Հայաստանի Հանրապետության դեսպանատան համատեղ նախաձեռնությամբ, կազմակերպվեց միջոցառումների շարք՝ նվիրված Հայրենական Մեծ պատերազմի հաղթանակին ու Շուշիի ազատագրման 15-ամյա հոբելյանին:

Առավոտյան, Վրաստանում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Հրաչ Սիլվանյանի առաջնորդությամբ, դեսպանատան աշխատակիցները Թբիլիսիում ծաղկեպսակ դրեցին Անհայտ Զինվորի գերեզմանին:

Նույն օրը Թբիլիսիի առաջնորդանիստ Սուրբ Գևորգ եկեղեցում, հանդիսապետությամբ թեմի առաջնորդ Տ. Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի, կատարվեց հոգեհանգստյան արարողություն՝ ի հիշատակ Մեծ Հայրենականի և Արցախի ազատագրման համար նահատակված ազատամարտիկների: Հոգեհանգստին ներկա գտնվեցին ՀՀ դեսպանը, Վրաստանի Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակին կից Հանդուրժողականության կենտրոնի նախագահ Բեքա Մինդիաշվիլին, Վրաստանի գրողների միության նախագահ Մաղվալա Գոնաշվիլին, Թբիլիսիում գրանցված հասարակական կազմակերպությունների ղեկավարներ: Հավարտ արարողության ներկաներին դիմեց Սրբազան Հայրը:

Արարողությունից հետո ներկաները բարձրացան Թբիլիսիի Հայ գրողների և հասարակական գործիչների Պանթեոն, ուր թեմի մշակույթի բաժնի (ղեկավար՝ Լևոն Չիդիլյան) և Առաջնորդարանին կից երիտասարդական հանձնախմբի նախաձեռնությամբ կազմակերպվեց ծառատունկ: Ի նշանավորումն օրվա խորհրդի, տնկվեց 36 եղևնի, համաձայն Պանթեոնում հանգչող հայ մտավորականների թվի: Ծառատունկին մասնակցում էին թբիլիսյան հասարակական կազմակերպություններ, հայկական դպրոցների, վիրահայ լրատվական ու մշակութային կազմակերպությունների, ինչպես նաև Վրաստանի գրողների միության, Մարդու իրավունքների պաշտպանության գրասենյակի, մշակութային փոխհարաբերությունների կենտրոն «Կովկասյան տան», Թբիլիսիի քաղաքապետարանի Մթածմինդա, Դիդուբե և Հայ գրողների ու հասարակական գործիչների Պանթեոնի տնօրինության ներկայացուցիչներ և բազմաթիվ հայորդիներ: Ծառատունկի ավարտին անցկացվեց դասական ու ժողովրդական երաժշտության համերգ, որին մասնակից դարձան «Կովկասյան նվագախմբի» հայ անդամներն ու թբիլիսահայ տաղանդավոր երգիչ-երգչուհիները: Միջոցառմանը ներկաներին շնորհավորական խոսքով դիմեց ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Հրաչ Սիլվանյանը:

Երեկոյան, ՀՀ դեսպանատան նախաձեռնությամբ և երևանյան «Մուշ» սննդի արտադրամասի աջակցությամբ, թվով 130 թբիլիսահայ վետերանների ցույց տրվեց նյութական աջակցություն:

Հաղթանակի օրը նշանավորող միջոցառումներ անցկացվեցին նաև Սամցխե-Ջավախքում և Աջարիայում: Բաթումի հայ համայնքի, տեղի Սուրբ Խաչ հայոց եկեղեցու

և Աջարիայի ղեկավարության համատեղ ծրագրով տեղի վետերաններին, այդ թվում՝ հայ, բաժանվեց օգնություն:

ԹԲԻԼԻՍԻՈՒՄ ՆՇՎԵՑ ՍԱՅԱԹՆՈՎՅԱՆ ՎԱՐԴԱՏՈՆԸ

Մայիսի 27-ին Թբիլիսիի առաջնորդանիստ Սուրբ Գևորգ եկեղեցու բակում, ուր արդեն 212 տարի հանգչում է Սայաթ-Նովան, տեղի ունեցավ ավանդական Վարդատոնը: Տոնախմբությանը նախորդեց թեմի առաջնորդ Տ. Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի ձեռամբ Հոգեգալստյան տոնի առիթով մատուցված Սուրբ Պատարագը, հընթացս որի առաջնորդ Սրբազան Հայրը օրվա խորհրդի առիթով հավուր պատշաճի քարոզ խոսեց և շնորհավորեց հարյուրավոր ներկաներին Վարդատոնի կապակցությամբ:

Ահա արդեն 93-րդ անգամ տոնվող Վարդատոնի հիմքը դրվել է 1913-ի աշնանը Հովհաննես Թումանյանի, Գևորգ Բաշինջաղյանի, Իոսեբ Գրիշաշվիլու և Իոսեբ Իմեդաշվիլու նախաձեռնությամբ: Վարդատոնը նշվում է յուրաքանչյուր տարի մայիսի վերջին կիրակի օրը: Մայիսին, որովհետև մայիսը՝ վարդաբույր ամիս է, վարդերը՝ սիրո և գեղեցկության խորհրդանիշ... այն, ինչ իր երգերում քարոզում էր մեծ բանաստեղծը: Ու քարոզում հայերեն, վրացերեն, ադրբեջաներեն և պարսկերեն լեզուներով միաժամանակ: Շնորհիվ իր մարդասեր ու սրտաբորբ քնարի՝ Սայաթ-Նովան դարձավ ոչ միայն հայ, այլև անդրկովկասյան երեք ժողովուրդների սիրերգակը:

Թիֆլիսը զարդարող ու նրանում ապրող ժողովուրդներին բարու թելերով կապող Վարդատոնի 93-րդ էջն իր բովանդակային հագեցվածությամբ նշվեց առավել քան մեծ շուքով: Մայիսյան վարդաբույր օրը կազմակերպվել էր Վիրահայոց թեմի մշակույթի բաժնի, Թբիլիսիի Պ. Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնի, Վրաստանի հայերի միության ջանքերով:

Վարդատոնի հանդիսավոր մասը բացեց և հիանալի վարեց Վրաստանի հայ գրողների «Վերնատուն» միության նախագահ, բանաստեղծ Գևորգ Մնիչյանը: Նա հատկապես արժեվորեց 93-ամյա ալեհեր Վարդատոնի տարեցտարի երիտասարդացող ոգին, թարմությունն ու շունչը: Օրհնության իր խոսքում թեմի առաջնորդ Տ. Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը կոչեց ընթանալ Սայաթ-Նովայի հետքերով, տիրապետել մի քանի լեզուների, որոնցից առաջնայինը համարել մայրենին, հաճախել հայկական դպրոց:

Հայ-վրացական դարավոր բարեկամությունը փաստող գեղեցիկ օրինակներով համեմվեց և վրաց հանրաճանաչ գրող, Վարդատոնի պատմության ամենամյա այցելուի՝ Կոնստանտինե Գամսախուրդիայի թոռան՝ Կոկա Գամսախուրդիայի ելույթը: Հայ ու վրաց ժողովուրդների ապագան միասնաբար ու սայաթնովյան սիրով կառուցելու հորդոր ուղղեցին Հայաստանի Հանրապետության վարչապետի խորհրդական Ստեփան Մարգարյանը, Վրաստանի հայերի միության նախագահ Հենրիխ Մուրադյանը, Վրաստանի հոգևոր ճեմարանի պրոռեկտոր Սերգո Վարդոսանիձեն, Վրաստանի Մարդու իրավունքների պաշտպան Սոզար Սուբարին, Վրաստանի գրողների միության նախագահ Մաղվալա Գոնաշվիլին, արձակագիր Ռևազ Միշվելաձեն:

Ներկաները ջերմությամբ ու երախտագիտությամբ ընդունեցին բազմավաստակ թարգմանիչ-բանաստեղծներ, Վրաստանի գրողների միության անդամներ Գիվի Շահնազարի, Անահիտ Բոստանջյանի, սայաթնովագետ Զեզվա Մեդուլաշվիլու, Հայաստանի գրողների միության անդամներ, բանաստեղծներ Ռուզաննա Ասատրյանի